

Հողի ձեռքբերում և կենսամիջոցներ

Ներկա իրավիճակը

- Գյուղատնտեսական գործունեությունը տեղացիների կենսակերպի հիմնական աղբյուրն է: Գնդեվազը հայտնի է բարձրորակ, ուշ հասնող ծիրանի արտադրությամբ: Տնտեսական գործունեության այլ տեսակները կենտրոնացած են գյուղատնտեսության, Ջերմուկի շշալցման գործարանների, Գեոթիմի աշխատանքների և սեզոնային տուրիզմի վրա:
- Ամռան ամիսներին Ամուլսարը շրջապատող բլուրներն օգտագործվում են սեզոնային հովիվների կողմից անասուններին արածեցնելու համար:



Ծրագրի հավանական ազդեցությունը տեղացի հողատերերի և հողօգտագործողների վրա

- Ծրագրի շինարարության և շահագործման նպատակով անհրաժեշտ կլինի ձեռք բերել մոտավորապես 274 մասնավոր հողակտորներ, մասնավորապես Գնդեվազ և Սարավան համայնքների շրջակայքում: Սա մասամբ ներառում է Գնդեվազի ծիրանի այգիները:
- Որոշ հողեր անհրաժեշտ կլինի ձեռք բերել միայն հանքարդյունահանման ժամանակահատվածի համար: Հանքի փակումից հետո դրանք կրկին կեզրագծվեն, կվերականգնվեն և կփոխանցվեն տեղական համայնքներին:
- Կույտային տարրավազման հրապարակի շրջակայքում գտնվող տարածքը կվերականգնվի, սակայն տեխնիկական սահմանափակումներով պայմանավորված այն օգտագործման համար պիտանի չի լինի:
- Ծրագրային տարածքը անասուններ արածեցնող և խոտաբույսեր հավաքող սեզոնային հովիվները նույնպես կարող են ենթարկվել ազդեցությունների:

Հնարավոր ազդեցությունների և խնդիրների լուծմանն ուղղված Լիդիանի քայլերը

- Հողի ձեռքբերումն իրականացվելու է բանակցությունների միջոցով: Փոխհատուցման տարբերակները համաձայնեցվելու են յուրաքանչյուր հողատիրոջ կամ հողօգտագործողի հետ: Հողատերերին կտրվի “հող հողի դիմաց” կամ կանխիկ փոխհատուցում ստանալու հնարավորություն: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ “հող հողի դիմաց” տարբերակը սոցիալական առումներով ապահովում է ավելի դրական արդյունք:
- Կանխիկ փոխհատուցման տարբերակում փոխհատուցվելու է թե հողամասի արժեքը և թե նոր հողակտորի վրա համարժեք բերքի վերականգնման համար անհրաժեշտ ծախսերը:
- Ընկերության՝ հողի ձեռքբերման և փոխհատուցման մոտեցումը համապատասխանելու է Հայաստանի օրենսդրությանը և Ծրագրի բաժնետերերի, մասնավորապես ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի սահմանած միջազգային ստանդարտներին:
- Ծրագրի նախագծման ժամանակ փորձ է արվում հնարավորինս ապահովագրել հովիվներին Ծրագրով պայմանավորված ազդեցություններից: Անհրաժեշտության դեպքում նրանց կտրամադրվի աջակցություն՝ նոր արոտավայրեր գտնելու հարցում: Նախատեսվում է իրականացնել հովիվների կենսակերպի մշտադիտարկում՝ հնարավոր ազդեցությունների ավելի լավ ընկալման ու ըստ անհրաժեշտության աջակցման ծրագրերի մշակման նպատակով:

Որ ազդեցություններն ու խնդիրներն են լինելու երկարատև

- Տեղացիների որոշ մասը ստիպված է լինելու փոփոխել ավանդական կենսակերպը:
- Ծրագրի շրջանակներում օգտագործվող հողի մի մասը վերականգնման ենթակա չի լինի: